Տպագրված է ընդամենը 4 օրինակ
Օրինակ 2

Հաստատված է

«ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
գիտական հասարակական
կազմակերպության նոր խմբագրությամբ
կանոնադրությունը
«25»-ը հոկտեմբերի 2007 թ.
Ընդհանուր ժողովի կողմից

Ակադեմիայի Պրեզիդենտ՝
Գ. Բրուտյան
....

Գրանցված է

ՀՀ արդարադատության Նախարարի
«08»-ը օգոստոսի 2001 թ.
թիվ 786 հրամանով

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«06»-ը ....11.......... 2007 թ.
Գրանցման թիվ 211.171.04558
Վկայական 03Ա 078100

Պետական ռեգիստրի ղեկավար՝
Մ.Մարտիրոսյան
....

«ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
Գիտական հասարակական կազմակերպության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

Երևան-2007թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայոց փիլիսոփայական ակադեմիա» /այսուհետև՝ Ակադեմիա/ գիտական հասարակական կազմակերպությունը իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր միավորում է:

1.2 Ակադեմիան գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ այլ օրենքների և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Ակադեմիան գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և արտասահմանում: Արտասահմանյան որևէ երկրում իր գրասենյակների միջոցով գործելու դեպքում Ակադեմիան ղեկավարվում է նաև այդ երկրների օրենսդրությամբ:

1.4 Ակադեմիան կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր օտարերկրյա կազմակերպությունների հետ:

1.5 Ակադեմիան ունի իր խորհրդանիշը հետևյալ տեսքով. Ակադեմիայի լրիվ անվանման սկզբնատառերը (Հ, Փ, Ա) մեծատառ՝ խաչավորված տեսքով (կցվում է, էջ 9):

1.6 Ակադեմիան իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում ՀՀ արդարադատության նախարարության կողմից իր պետական գրանցման պահից, կարող է ունենալ իր անվանման հայերեն, անգլերեն, ռուսերեն գրառումներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշի պատկերով, դրոշմ, հաշվարկային և այլ հաշիվներ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ երկրների բանկերում ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.7 Ակադեմիայի լրիվ անվանում է՝ հայերեն՝ «Հայոց փիլիսոփայական ակադեմիա» գիտական հասարակական կազմակերպություն, ռուսերեն՝ «Армянская Философская Академия» научная общественная организация, անգլերեն՝ «Armenian Philosophical Academy» Scientific Non-Governmental Organization, կրճատ անվանումը՝ հայերեն՝ ՀՓԱ, ռուսերեն՝ АФА, անգլերեն՝ APhA.

1.8 Ակադեմիայի գլխավոր գրասենյակի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0019, Մարշալ Բաղրամյանի պող., 24, 51 սենյակ,
հեռ.՝ (37410) 52-52-71, 27-92-91, ֆաքս՝ (37410) 56-92-81, e-mail: brut@sci.am :

2. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ակադեմիայի նպատակն է.

2.1.1 օրենքով սահմանված կարգով նպաստել հայոց փիլիսոփայական մտքի զարգացմանը և համաշխարհային փիլիսոփայական մտքի ինտեգրմանը, աջակցել փիլիսոփայության բնագավառում անվանի գիտնականների և կրթօջախների համագործակցությանը,

2.1.2 նպաստել երիտասարդ հասարակագետների գիտական աճին:

2.2 Իր նպատակների կենսագործման համար Ակադեմիան.

2.2.1 օրենքով սահմանված կարգով ստեղծում է գիտահետազոտական խմբեր, գիտական խորհուրդներ, կենտրոններ, գիտական հանձնամարմիններ և նմանատիպ այլ ներակադեմիական գիտական կառուցվածքային օղակներ (ՆԳԿՕ);

2.2.2 կազմակերպում է գիտաժողովներ, հանդիպումներ, հրատարակումներ և համապատասխան այլ միջոցառումներ՝ օրենքով սահմանված կարգով:

2.3 Ակադեմիան կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել մասնաճյուղեր, գիտահետազոտական հիմնարկներ, հրատարակչություններ, հրատարակել գրքեր, ամսագրեր, թերթեր և այլն:

2.4 Ակադեմիան կարող է շնորհել պատվավոր դոկտորի (Honoris causa) աստիճան՝ Ակադեմիայի Պրեզիդենտի առաջարկով՝ Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, Նախագահության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.5 Ակադեմիան կարող է պարգևատրել իր կողմից հիմնադրված մեդալներով ու դիպլոմներով Ակադեմիայի գործունեությանն օժանդակող անձանց: Պարգևատրումը կատարվում է Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, Նախագահության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կամ Ակադեմիայի Պրեզիդենտի կարգադրությամբ:

2.6 Իր առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով Ակադեմիան կարող է սահմանված կարգով սեփականության իրավունքով ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

3. ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ակադեմիայի անդամ կարող են լինել ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները: Ակադեմիան կարող է ունենալ՝ ա/ իսկական անդամներ, բ/ թղթակից անդամներ, գ/ պատվավոր անդամներ, դ/ արտասահմանյան անդամներ, ե/ փորձագետ անդամներ, զ/ ակադեմիական խորհրդականներ:

3.2 Ակադեմիայի իսկական անդամ կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան, գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող և միջազգային ճանաչում ստացած աշխատանքներով, ընդունում են Ակադեմիայի կանոնադրությունը և օժանդակում Ակադեմիայի խնդիրների իրականացմանը:

3.3 Ակադեմիայի թղթակից անդամ կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, ովքեր ունեն գիտությունների

դոկտորի գիտական աստիճան, գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող աշխատանքներով, ընդունում են Ակադեմիայի կանոնադրությունը և օժանդակում Ակադեմիայի խնդիրների իրականացմանը:

3.4 Ակադեմիայի պատվավոր անդամ կարող են ընտրվել Հայաստանի կամ օտարերկրյա մեծահամբավ գիտնականները, հասարակական և այլ գործիչները, ովքեր նպաստում են Ակադեմիայի գործունեությանը:

3.5 Իրենց գիտակազմակերպական գործունեությամբ Հայաստանի հետ կապված, գիտական ակնառու արդյունքներ ունեցող և գիտության տվյալ բնագավառում ճանաչված գիտնականները կարող են ընտրվել Ակադեմիայի արտասահմանյան անդամներ:

3.6 Ակադեմիայի փորձագետ անդամ կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության կամ այլ քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, ովքեր ներկայացնում են այլ գիտություններ և կարող են օգտակար լինել Ակադեմիային իրենց մասնագիտական և գիտակազմակերպչական գործունեությամբ:

3.7 Ակադեմիայի անդամներն ընտրվում են Ակադեմիայի Ընդհանուր ժողովի կողմից՝ նիստին մասնակից անդամների ձայների առնվազն երկու երրորդով: Ընտրության կանոնակարգը հաստատվում է Ակադեմիայի Նախագահության կողմից: Ակադեմիայի անդամներն ընտրվում են ցմահ՝ սույն կանոնադրության պահանջներն անբասիր կատարելու պայմանով:

3.8 Ակադեմիայի ակադեմիական խորհրդական կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և ակտիվորեն նպաստում են Ակադեմիայի գործունեությանը:

3.9 Ակադեմիայի ղեկավար մարմիններում կարող են ընտրվել միայն Ակադեմիայի հայաստանյան անդամները,

3.10 Ակադեմիայի անդամները իրավունք ունեն՝

3.10.1 ընտրել Ակադեմիայի ղեկավար մարմիններ,

3.10.2 առաջադրել և ընտրել Ակադեմիայի անդամության թեկնածուներ

3.10.3 ներկայացնել առաջարկներ Ակադեմիայի աշխատանքների, ծրագրերի վերաբերյալ,

3.10.4 մասնակցել Ակադեմիայի միջոցառումներին,

3.10.5 սպառիչ տեղեկություն ստանալ Ակադեմիայի գործունեության մասին,

3.10.6 անվճար ստանալ Ակադեմիայի հրատարակություններից մեկական օրինակ

3.10.7 բողոքարկել Ակադեմիայի կանոնադրության դրույթները, Ակադեմիայի ղեկավար մարմինների, պաշտոնատար անձանց որոշումները Ակադեմիայի վերադաս մարմիններին կամ դատական կարգով:

3.11 Ակադեմիայի անդամները պարտավոր են՝

3.11.1 ուժերի ներածին չափով մասնակցել Ակադեմիայի աշխատանքներին,

3.11.2 կատարել Ակադեմիայի ընդհանուր ժողովի և նախագահության որոշումները,

3.11.3 հնարավոր բոլոր միջոցներով աջակցել Ակադեմիային:

3.12 Ակադեմիայի անդամությունից դուրս գալը կատարվում է անդամի գրավոր դիմումի հիման վրա՝ Ակադեմիայի նախագահության որոշմամբ, իսկ Ակադեմիայի անդամությունից հեռացումը կատարվում է Ակադեմիայի նախագահության որոշմամբ՝ կանոնադրական դրույթների խախտման համար:

4. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Ակադեմիայի բարձրագույն մարմինը Ակադեմիայի անդամների ընդհանուր ժողովն է, որն ունի Ակադեմիայի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ակադեմիայի ղեկավար մարմիններն են Ակադեմիայի Նախագահությունը, Ակադեմիայի Պրեզիդենտը: Ակադեմիայի վերահսկողություն իրականացնող մարմինը Վերստուգիչ հանձնաժողովն է:

4.2 Ակադեմիայի ընդհանուր ժողովին վճռական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ակադեմիայի բոլոր անդամները; ակադեմիական խորհրդականները նույնպես ունեն վճռական ձայնի իրավունք՝ բացառությամբ Ակադեմիայի անդամներ ընտրելիս:

4.3 Ակադեմիայի ընդհանուր ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ակադեմիայի ընդհանուր ժողովի անցկացման կարգն ու ժամկետները սահմանվում են Ակադեմիայի Նախագահության որոշմամբ:

4.4 Ակադեմիայի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրվում է Ակադեմիայի Պրեզիդենտի կողմից, Ակադեմիայի անդամների մեկ երրորդի կամ Վերստուգիչ հանձնաժողովի պահանջով:

4.5 Ակադեմիայի ընդհանուր ժողովն իրավասու է որոշումներ ընդունել, եթե ժողովին մասնակցում են Ակադեմիայի բոլոր անդամների կեսից ավելին, որոշումներն ընդունվում են Ակադեմիայի բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ 4.7.5 կետի, որի դեպքում որոշումներն ընդունվում են Ակադեմիայի բոլոր անդամների ձայների առնվազն երկու երրորդով:

4.6 Ակադեմիայի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերի մասին որոշումները կարող են ընդունվել նաև հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ /ֆաքս, էլեկտրոնային փոստ, հեռախոս և այլն/:

4.7 Ակադեմիայի ընդհանուր ժողովը.

4.7.1 հաստատում է Ակադեմիայի կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ ու լրացումներ,

4.7.2 ընտրում է Ակադեմիայի անդամներ,

4.7.3 ընտրում է Ակադեմիայի Պրեզիդենտ, գլխավոր գիտնական քարտուղար/ներ/ և Վերստուգիչ հանձնաժողով՝ երկու տարի ժամկետով:

4.7.4 ընտրում է Նախագահություն՝ երկու տարի ժամկետով:

4.7.5 որոշումներ է ընդունում Ակադեմիայի վերակազմակերպման և լուծարման մասին:

4.7.6 հաստատում է Ակադեմիայի գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները

4.8 Ակադեմիայի Պրեզիդենտը, գլխավոր գիտնական քարտուղարը/ները/ ի պաշտոնե հանդիսանում են Ակադեմիայի Նախագահության անդամներ:

4.8.1. Ակադեմիայի Նախագահության կազմը համալրվում է Ակադեմիայի՝ ընդհանուր ժողովի կողմից ընտրված այլ անդամներով:

4.8.2. Ակադեմիայի ընդհանուր ժողովի նիստերը գումարվում են Պրեզիդենտի կողմից ըստ անհրաժեշտության:

4.9 Ակադեմիայի Նախագահության նիստը իրավասու է, եթե նիստին մասնակցում են Նախագահության անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.9.1 Նախագահությունը կարող է որոշումներ կայացնել ինչպես նիստեր գումարելով, այնպես էլ հեռահաղորդակցության միջոցներով /նամակ, ֆաքս, էլեկտրոնային փոստ, հեռախոս և այլն/:

4.10 Ակադեմիայի Նախագահությունը.

4.10.1 իրականացնում է Ակադեմիայի ղեկավարումը Ակադեմիայի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածներում,

4.10.2 նախապատրաստում և հրավիրում է Ակադեմիայի ընդհանուր ժողովները,

4.10.3 հաստատում է Ակադեմիայի հիմնական միջոցառումների տարեկան ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,

4.10.4 ստեղծում և լուծարում է Ակադեմիայի առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), տնտեսական ընկերությունները և ՆԳԿՕ-ները,

4.10.5 նշանակում է հաշվապահ (գանձապահ), ժամկետը՝ իր հայեցողությամբ: Վերջինս Նախագահության նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով և պատասխանատու է տարեկան բյուջեի և տարեկան ֆինանսական հաշվետվության համար: Նախագահության որոշմամբ գանձապահի պարտականությունները կարող է կատարել նաև Ակադեմիայի գլխավոր գիտնական քարտուղարներից կամ գիտնական քարտուղարներից որևէ մեկը,

4.11 Ակադեմիայի Պրեզիդենտը.

4.11.1 համակարգում և ղեկավարում է Ակադեմիայի գործունեությունը,

4.11.2 առանց լիազորագրի ներկայացնում է Ակադեմիան տարբեր կազմակերպություններում, տալիս լիազորագրեր,

4.11.3 տնօրինում է Ակադեմիայի շարժական և անշարժ գույքը, ֆինանսական միջոցները,

4.11.4 Ակադեմիայի անունից կնքում է պայմանագրեր,

4.11.5 բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

4.11.6 նշանակում և ազատում է Ակադեմիայի առանձնացված ստորաբաժանումների, ՆԳԿՕ-ների ղեկավարներին, գիտնական քարտուղարին/ներին/, Պրեզիդենտի

գլխավոր խորհրդականին/ներին/, խորհրդականին/ներին/, օգնականին/ներին/, որոնք կարող են ընտրված լինել Ակադեմիայի Նախագահության կազմում կամ Ակադեմիայի անդամ չհանդիսանալ:

4.11.7 հաստատում է Ակադեմիայի հաստիքային աշխատողների հաստիքներ, արձակում համապատասխան հրամաններ:

4.13 Ակադեմիայի առանձնացված ստորաբաժանումների և ներակադեմիական գիտական կառուցվածքային օղակների (ՆԳԿՕ) ղեկավարները.

4.13.1 ղեկավարում են Ակադեմիայի առանձնացված ստորաբաժանումների և գիտահետազոտական խմբերի, գիտական խորհուրդների, աշխատանքային հանձնամարմինների և այլ ներակադեմիական գիտական կառուցվածքային օղակների աշխատանքները:

4.14 Ակադեմիայի գլխավոր գիտնական քարտուղարը/ները/, գիտնական քարտուղարը/ները/.

4.14.1 կազմակերպում են Ակադեմիայի գործավարությունը,

4.14.2 նախապատրաստում են Ընդհանուր ժողովի և Նախագահության նիստերը, անհրաժեշտության դեպքում կազմում են արձանագրություններ,

4.14.3 ապահովում են անհրաժեշտ տեղեկատվությունը,

4.14.4 պատասխանատու են Ակադեմիայի արխիվի համար,

4.14.5 իրականացնում են Պրեզիդենտի կոնկրետ հանձնարարություններ՝ Ակադեմիայի աշխատանքների կազմակերպման և բարելավման ուղղությամբ,

4.14.6 Նախագահության որոշմամբ կարող են կատարել նաև Ակադեմիայի հաշվապահի (գանձապահի) պարտականությունները:

4.15 Պրեզիդենտի գլխավոր խորհրդականը/ները/, խորհրդականը/ները/.

4.15.1 Առաջարկություններ են անում Պրեզիդենտին՝ Ակադեմիայի խնդիրների և ծրագրերի արդյունավետ իրագործման վերաբերյալ,

4.15.2 Ապահովում են անհրաժեշտ տեղեկատվական բազան,

4.15.3 Ձևակերպում են Ակադեմիայի գործունեության ծրագրեր, աշխատանքային պլաններ, հանդես են գալիս կազմակերպչական նախաձեռնություններով:

4.16 Ակադեմիայի Պրեզիդենտի օգնականը/ները/.

4.16.1 ապահովում են Պրեզիդենտի և Նախագահության, Նախագահության և Ակադեմիայի մյուս անդամների միջև կայուն և մշտական կապ,

4.16.2 Աջակցում են Ակադեմիայի ընթացիկ հարցերի լուծմանը:

4.17 Ակադեմիայի Վերստուգիչ հանձնաժողովը.

4.17.1 հսկողություն է իրականացնում Ակադեմիայի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, ստուգում է Ակադեմիայի ֆինանսական փաստաթղթերը, այդ թվում հաշվեկշիռը, հետևում է գույքի պահպանմանը,

4.17.2 պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ակադեմիայի ընդհանուր ժողովին Ակադեմիայի ֆինանսատնտեսական գործունեության մասին,

4.17.3 որոշումներ է ընդունում հանձնաժողովի անդամների երկու երրորդի մասնակցությամբ՝ մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.17.4 Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Ակադեմիայի Պրեզիդենտը և Նախագահության անդամները:

5. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ակադեմիայի սեփականությունը գոյանում է անդամների անդամավճարներից, որը սահմանվում է միայն Ակադեմիայի Արտասահմանյան անդամների համար տարեկան 100 ԱՄՆ դոլարի չափով, նվիրատվություններից, հրատարակչական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված նմանատիպ գործունեությունից և աղբյուրներից:

5.2 Ակադեմիայի միջոցներն օգտագործվում են միայն Ակադեմիայի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5.3 Ակադեմիայի տարեկան ընդհանուր ծախսերում կազմակերպչական ծախսերի մասնաբաժնի առավելագույն չափը սահմանվում է 50% :

6. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Ակադեմիան կարող է վերակազմակերպվել իր ընդհանուր ժողովի որոշմամբ, Ակադեմիայի բոլոր անդամների ձայների առնվազն երկու երրորդով՝ օրենքով սահմանված կարգով:

6.2 Ակադեմիան կարող է լուծարվել իր ընդհանուր ժողովի որոշմամբ, Ակադեմիայի բոլոր անդամների ձայների առնվազն երկու երրորդով, կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

6.3 Ընդհանուր ժողովի կողմից Ակադեմիայի լուծարման դեպքում լուծարման որոշումը հնգօրյա ժամկետում գրավոր հայտնվում է ՀՀ արդարադատության նախարարությանը, որի համաձայնությամբ ստեղծվում է լուծարման հանձնաժողով, սահմանվում են լուծարման կարգը և ժամկետը:

6.4 Լուծարման հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով օգտագործում է Ակադեմիայի կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե:

6.5 Լուծարման դեպքում գույքի հետ կապված վեճի առկայության պայմաններում հարցը լուծվում է դատարանի կողմից:



Ամրակարված 5-9 էջ

«ARMENIAN PHILOSOPHICAL ACADEMY» SCIENTIFIC NON-GOV. ORG.
«АРМЯНСКАЯ ФИЛОСОФСКАЯ АКАДЕМИЯ» НАУЧНАЯ ОБЩЕСТВ. ОРГАНИЗАЦИЯ
00068944

STATE REGISTER AGENCY OF JURIDICAL PERSONS OF RA
АГЕНТСТВО ГОСУДАРСТВЕННОГО РЕГИСТРА ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ
1-054